

լինէր նորան կապել երեխաների ներքին հոգեկան աշխարհի հետ: հետեւապէս և միակերպ մօտ յարաբերութեան մէջ չէ նիւթը նոցա անմիջական հետաքրքրութեան շրջանի հետ: Ապա պէտք է ի նկատի ունենալ որ ինչպէս ներքին նոյնպէս և արտաքին տարրեր պայմանների ազդեցութեանց տակ իւրաքանչիւր երեխայի աշխարհահայեցողութեան անհատական շրջանը գումարուում գասաւորւում է: այդ պատճառով էլ նոցանից իւրաքանչիւրի մէջ մինչև ուսման սկիզբը կադմուած են լինում մի քանի այլ ընդհանրացումներ կենտրոններ և ուսուցման ազդեցութեան տակ շարունակուած են տարրեր կերպով զարգանալ: Այդ պատճառով մէկը աւելի հեշտ կերպով է իւրացնում հետեւապէս և աւելի է հետաքրքրւում մէկով, իսկ միւսը մի այլ առարկայով: տարրեր հասակ ունեցող երեխաներին որոնք ապրում են տարրեր պայմաններում, տարրեր կերպով հետաքրքրութիւն է պատճառում առարկան:

Այս հիման վերայ վերեւում պարզաբանուած զիդակտիկական պահանջների զուտ պէտք է համարել մանկավարժական նպատակների համար ընտրած ուսումնարանական նիւթի կանոնաւոր պահանջը և ընդհանուր ուսումնարանական դասընթացի կանոնաւոր բաշխումը:

Մի անգամ էլ կանգ առնելով մեր ստացած եզրակացութեանց վերայ, մենք տեսնում ենք, որ դուրս գալով Հերբարտեան ուսուցման թէորիայի հիմնական սկզբունքներից, մենք պէտք է մօտենայինք զիդակտիկայի այն հիմնական կանոններին, որոնց հետ դժուար թէ չհամաձայնուի որջամիտ դասատուներից մէկը, մինչև անգամ եթէ, այդպիսին չհամաձայնուի Հերբարտի յայտնած այն գաղափարի հետ, որ հետաքրքրութեան յառաջացումը ուսման իրրեւ միակ նպատակ է ձանաչում:

Իսկապէս, արդեօք վերոյիշեալ ձեւը միակ ձանապարհը չէ ինչպէս մանկան բոլոր հոգեկան ոյժերի զարգացման, նոյնպէս և այդ նպատակի համար գործադրուող անհրաժեշտ նիւթի աւելի զիտակցական և հաստատուն իւրացման համար:

Ուրեմն ինչպէս պէտք է պատասխանել

այն հարցին, որ դոււած է այս յօդուածի խորագրում: Ի՞նչպէս պէտք է ուսուցումը հետաքրքիր դարձնել մանկանց համար: Այս հարցին իրրեւ պատասխան յառաջ ենք բերում Հերբարտի կարծիքը, որի հետ համակարծիք ենք և մենք՝ պատաստութեան տրուեստի մէջն է հետաքրքրութիւնը: Այսպիսով ուրեմն մանկանց դէպ ուսումն ունեցած հետաքրքրութիւնը մի առանձին բացառիկ բան չէ, զանազան յանկարծական կամ անակնկալ միջոցներով յառաջացող, այլ մի անբաժնալի յատկանիշ է կազմում դաստիարակող ուսուցման, նա արդարեւ մի մշտական ուղեկից է կանոնաւոր դասատուութեան և այն ուսուցումը, որ յառաջ չի բերում մանկանց մէջ հետաքրքրութիւն, իւր արմատի մէջ պարունակում է մի ինչ որ անկանոն բան:

Թարգմ. Գ. Ղ.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

— Ֆիլադելֆիայի հնագիտական ընկերութեան յանձնարարութեամբ նոյն քաղաքի պրոֆեսոր Պիտերը Բարելաւոց աշխարհում շատ նշանաւոր պեղումներ է արել հին նարուր քաղաքի տեղում: Պիտերը բացել է մի հին տաճար, որ կառուցած է եղել Բարելաւոց Արգուր թաղաւորը Բրիտոսից 21800 տարի առաջ, Այս տաճարի աղիւսից շինուած հիմքի վերայ պահպանուել են կրեւիքներ Սարգոն Ա-ի և նորա որդի Նաոռն-Սինայի անուններով: որոնք ապրել են Բրիտոսից 31800 տարի առաջ: Պիտերի հետ աշխատող Ամերիկայի հիւպատոսը Բաղդադում՝ Էյնսը այդ տաճարի հարաւ-արեւելեան կողմում բացել է մի պատ 17 մետր (մօտ ութ սաժէն) լայնութեամբ, որ չընկալուած է տաճարը, Աղիւսների վերայ եղած արձանագրութիւնից երեւում է, որ այդ պատի շինողն է վերոյիշեալ Նաոռն-Սինան, Բայց ամենից նշանաւոր գիւտը այն սենեակն է, որ Էյնսը բացել է տաճարի հարաւ-արեւելեան անկիւնում: Սենեակը շինուած է աղիւսից, ոչ դուռն ունի, ոչ լուսամուտ, նորա մուտքը առաստաղից է: Արձանագրութեանը նայելով Արգուր թաղաւորի շինածն է այդ սենեակը, Դորա տակը գտնուեցաւ մի այլ սենեակ, բոլորովին առաջինի նման և նորա մէջ հին ձեռագրեր, մագաղաթի մնացորդներ և այլն: Էյնսը ենթա-

գրում է: որ երկու սենեակն էլ նարուբի տաճարի գիւմն են եղել: Աւելի խոր պեղելով էյնքը գրտել է այլ երկու տաճարներ՝ մէկը միւսի տակ: Խորութիւնից էյնքը ենթադրում է: որ այդ տաճարները Քրիստոսից 7,000 տարի առաջ պէտք է շինուած լինին: Աւելին տաճարի մէջ գտնուել է մի զոհարան և նորա վերայ գրուած երկու անօթներ: իսկ ամբողջ պեղումների արդիւնքն է 1,000 մեծ անօթներ գտնադան մետաղներից: 1,000 մարմարեայ բաժակներ: 100 բարեւական դմուռ: բազմաթիւ գէնքեր: Հին կարասիներ և այլն: բոլոր անօթների թիւն է 26,000՝ երբայերէն: արաբերէն և ասորերէն արձանագրութիւններով:

* *

—Աննայի ակնարոյթ Միլլէրը գտել է աչքի եզրագտական հիւանդութեան տրախոմայի բացիլը: Այդ հիւանդութիւնը կոչուում է եզրագտական, որովհետեւ շատ տարածուած է եզրագտութեամբ, թէեւ ուրիշ շատ երկիրներում էլ խոր արմատներ է ձգել: մանաւանդ շքաւոր դասակարգի մէջ: Տրախոման մի այնպիսի հիւանդութիւն է: որ զժուարութեամբ է բժշկուում և մինչև անգամ կուրութիւն պատճառող հանգամանքներից առաջինն է: նայելով այդ հիւանդութեան մի քանի յատկանիշներին և տարածուելու եղանակին: գիտնականները վաղուց արդէն ենթադրում էին: որ դորա համար մի յատուկ բացիլ պէտք է լինէր: բայց այդ բացիլը չէր յաջողուում առանձնացնել և ուսումնասիրել նորան: Միլլէրը այդ արեց և նորա զեկուցումից երևում է: որ դա մի կարճ: բարակ և նուրբ կողիկ է: որը ստանալու համար հիւանդ աչքից վերցնում են մի կաթիլ հիւթ և որոշեալ կերպով պատրաստուած մի սննդարար նիւթի մէջ են ածում: Տրախոմայի բացիլը այստեղ բազմանում է քորոցի գլխի մեծութեամբ թափանցիկ կաթիլների ձևով: Այժմ մնում է ուսումնասիրել այդ բացիլը և հաստատել նորանից առաջ եկած հիւանդութեան տեսակը՝ թէ արդեօք դա միայն տրախոմայն է յատուկ: թէ ուրիշ հիւանդութեան էլ պատճառ կարող է լինել:

* *

—Բժշկապետ Պալոտ մի ժամանակ մեծ հրաշակ հանեց սապատող երեխաների մէջքը ուղղելու փորձերով: որոնց մասին յայտարարում էր: թէ մեծ յաջողութեամբ են վերջանում: ուստի և բազմաթիւ ծնողներ վստահութեամբ դիմում էին նորան իւրեանց երեխաների սապատը ուղղելու աղբիւրկութեամբ: Սակայն այժմ յայտնուում է: որ գեռ վերջնական եղրակացութեան դալ այդ փորձերի յաջողութեան մասին շատ զժուար է: որովհետեւ Պալոտի փորձերից շատերը ցանկալի

վախճան չեն ունեցել և մինչև անգամ փորձի ենթարկուած երեխաներից ոմանք մեռել են չղիմանալով փորձին:

* *

Իենայի համալսարանի փիլիսոփայութեան բաժինը պատուոյ դոկտորի աստիճան է շնորհել բաղմաշխատ և բաղմարդին Հայր Ղ. Ալիշանին:

* *

Պաղեստինի մի հին քարտէզ է գտնուել անցեալ գեոհեմաթերին Մեռեալ ծովի արևելեան կողմում գտնուած Մովսարացուց հին մայրաքաղաք Մագիրայում: Այստեղ: հին քրիստոնէական Բազիլիկի աւերակների վերայ շինուած մի եկեղեցւոյ մէջ: նկատեցին մեծ ճարտարութեամբ կազմած մի հսկայական մոզայիկ: որ ներկայացնում է Ասորիքի: Պաղեստինի և եզրագտութեան քարտէզը և ակնյայտին կերպով պատկանում է Պ կամ ամենաուշը Ե դարուն: Քարտէզը սկզբում շատ մեծ է եղել և ծածկել է Բազիլիկի ամբողջ յատակը (280 քառ. մետր): բայց այժմ մնացել է միայն 18 քառ. մետր: որ կրկին նոր եկեղեցւոյ յատակն է կազմում և այդ պատճառով իսկ պահպանուել է: Եկեղեցու ծերունի սպասաւորներն զեռ լաւ յիշում են: որ շատ տարիներ առաջ ուղիղ եկեղեցւոյ դրան շեմքի առաջ կարգացուում էին Եփեսոս և Չմիւռնա անունները: քարտէզը բովանդակում էր ուրեմն նաև Փոքր Ասիան: Այս նոր գտնուած քարտէզի արժէքը երբայական և քրիստոնէական հնագիտութեան: ինչպէս նաև աշխարհագրական ու պատմական ինդիքների համար՝ շատ մեծ է: որովհետեւ նորա վերայ գտնուում են մինչև այժմ անծանօթ մնացած քաղաքների: ծանօթ քաղաքների կամ սրբավայրերի տեղագրութեան համար աւելի ճիշտ որոշումներ: պատմութեամբ են ժամանակակից քրիստոնէաների աւանդութիւններ ս: տեղեացմասին և մինչև իսկ յառաջ են բերուում առանձին ասացուածներ Հին Կտակարանից: օրինակ Յակոր նահապետի մարգարէութիւնը Յովսէփի և Բենիամինի մասին: այն ևս մեր ձեռքն եղած աստուածաշնչի խօսքերից տարբեր կերպով: ճշտութեան օրինակ է այս քարտէզը: որովհետեւ այստեղ նշանակուած են ոչ միայն սարեր: գետեր: քաղաքներ: ինչպէս մեր ժամանակի քարտէզներում: այլ նաև ցոյց է տրուած և բնական զոյներով ներկայացրած իւրաքանչիւր փոքր ի շատեւ նշանաւոր քաղաքի կերպարանքը: մեծութիւնը և յատկագիծը: նշանակած է քանի դուռ կամ դարպաս ունի: որը արևելեան և որը արևմտեան կողմում: ինչ աչքի բնկնող շէնքեր կան մէջը: ինչ է նորա հին և ինչ ժամանակակից անունը: որտեղ են հարժա-

վայրներ գտնուում և որտեղ այրեր, որտեղ լեռներ և բլուրներ, գետեր և առուակներ, անտառներ և աղբիւրներ, աւազաններ և լճակներ, նաւակներ և նաւեր, մինչև իսկ որտեղ արմաւենիներ և բանաններ, Այս հետաքրքիր քարտեզը շուտով առաջին անգամ լոյս կը տեսնէ Գերմանիայում:

* *

Էին Աթէնքի յատակագիծը ճշգիւ որոշելու արգելք է լինում ցայժմ այն հանգամանքը, որ Ակրոպոլսի հիւսիս-արեւմտեան առապարին անմիջապէս կից տարիներ առաջ բնակութիւն էին հաստատել Անաֆի կղզուց գաղթած որմնագիրներ և ոչ մի պայմանաւ չէին համաձայնում տեղից շարժել: Եունական Հնագիտական ընկերութեան յաջողուել է այժմ խաղարկութեան միջոցաւ մի խոշոր գումար ձեռք բերելով յիշեալ որմնագիրների համար մի նոր բնակութեան տեղ գնել: Ուր և կը փոխադրուին նորա շուտով. իսկ հին բնակավայրում եկող աշնանից պեղումներ կսկսեն:

* *

Աշխարհիս ամենահիւսիսային լրագիրն է այժմ Շպիցերգիկի րերը, որ սկսել է նորերս լոյս տեսնել այդ հեռաւոր կղզու վերայ և որի բոլոր յոգուածներն այդ կղզուն են վերաբերում:

* *

Մի բոռոցիկ ցուցանանդես է ձեռնարկուում այժմ Միացեալ Նահանգների հարաւ-արեւմտեան մասի և Մեքսիկայի համար, որ տեղի կունենայ երկաթուղու մի երկար, սովորականից աւելի բնդարձակ կառքերից բաղկացած, գնացքի միջոցաւ: Այդ գնացքը պէտք է 6 ամիս ծանապարհորդէ և 16,000 կիլոմետր ծանապարհ կարէ, կանգ առնելով մեծ քաղաքներում: Առաքելի մէջ տեղաւորուած ապրանքները գործարանների ներկայացուցիչների ձեռքով գուրս կը տարուին և վրանների տակ ի ցոյց կը դրուին, աւելի կամ պակաս ժամանակով, նայած տեղի կարեւորութեանը:

* *

Ֆրանսիացի մի բժիշկ իւր նոր հրատարակած բրոշիւրով հաստատում է, որ օլեանդր բոյսի արտաշնչութիւնը գիշեր ժամանակ վնասակար է ոչ միայն երբ ծաղկած է այն, այլ նաեւ երբ տերեւներն են միայն:

* *

22 տարի առաջ մի կալուածատէր փորձ է արել հարաւային Անգլիայում խաղողի այգիներ տնկել: Փորձը ցոյց է տուել, որ որոշ տեսակի որթեր յաջողութեամբ աճում են այդտեղ և լաւ արդիւնք են տալիս:

— 37 —

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՄԱՅՐ ԱԹՈՐ.

Տ. ԵՐԵՄԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԱՀԸ ԵՒ ԹԱՂԱԹԸ.



Նոյեմբերի 3-ին, առաւօտեան ժամը 8-ին ի Տէր հանգեաւ Ս. ԼՅմիաճնի Սինօզի աւագ անդամ և Ս. Հռիփսիմէի վանքի վանահայր Տ. Երեմիա Արքեպիսկոպոսը: Հանգուցեալ Սրբազանը տկարացել էր հինգշաբթի հոկտեմբերի 30-ին մրսելուց և հետեւալ օրը մի փոքր աւելի ծանր զգալով իւրեան, շաբաթ օրը հրաւիրել էր Երեւանից բժիշկ պ. Ե. Եովհաննիսեանին խորհրդի: Պ. Եովհաննիսեանը ոչ մի ծանր հանգամանք չնկատելով հիւանդի դրութեան մէջ, կարեւոր հրահանգները տալուց յետոյ, պատուիրել էր մի երկու շաբաթ տանից դուրս չգալ: Եւ արդարեւ արդէն կիրակի երեկոյեան հանգուցեալը այնքան լու էր զգացել իւրեան, որ ընդունել էր միաբանակիցներից ոմանց և զիւղից այցելութեան եկածներին, որոնք երկար մնալով, գրեթէ առողջացած են համարել նորան և ոչինչ չկասկածելով, բաւական ուշ մեկնել են հանգուցելոյ մօտից:

Մահուան առաւօտ Սրբազանը ժամը 8-ից առաջ դարձնելով քնից, ծառային հրամայել է լուացուելու ջուր բերել և անկողնոյ մէջ լուացուելիս, յանկարծ ուշագնաց է եղել: Մինչ ծառան յետ բերել էր աշխատում Սրբազանին, ներս է մտնում Գեր.